ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայաստան

Մարզային տպագիր մամուլ

***Ծրագրի նպատակը**՝ թերթերի խմբագրական կազմի կարողությունները զարգացնելու և տպագրական աշխատանքների արդյունավետ ընթացքն ապահովելու միջոցով նպաստել Հայաստանի մարզային տպագիր մամուլի կայունությանը:*

Հայաստանի մարզերում ներկայումս տպագրվում է մոտ հիսուն անուն թերթ, որոնցից ոչ մեկն օրաթերթ չէ: Որոշ համայքներում թերթերը սահմանափակ թվով են տարածվում, իսկ երբեմն էլ ընդհանրապես չեն տարածվում: Գոյություն ունեցող թերթերը, որպես կանոն, անկախ չեն, քանի որ սեփական միջոցների սակավության պատճառով երբեմն տպագրվում են արտաքին ֆինանսական միջոցներով, իսկ նյութերի բովանդակային մասը վերահսկում են քաղաքական կուսակցությունները կամ հարուստ մարդիկ: Մեծ տարածում ունի նաև ինքնագրաքննությունը:

2006 թ. հուլիս ամսին Եվրասիա համագործակցություն հիմնադրամը մեկնարկեց երկամյա ծրագիր, որի նպատակն է զարգացնել մարզային տպագիր մամուլի կարողությունները և ապահովել թերթերի կայուն գործունեությունը: Հիմնադրամն աջակցում է 28 մարզային թերթերին: Աշխատանքներ են տարվում թերթերի խմբագրական կազմի մասնագիտական հմտությունները զարգացնելու, ֆինանսական կայունությունն ապահովելու և թերթերի տարածման ցանցն ընդլայնելու ուղղությամբ:

Կայունություն

Մարզային տպագիր մամուլի կայուն գործունեությունն ապահովելու նպատակով Եվրասիա համագործակցություն հիմնադրամն անցկացնում է կարողությունների զարգացման աշխատանքներ: 2006թ. աշնանն ուսուցողական դասընթացներ կազմակերպվեցին թերթերի կառավարման, լրագրության և մակետավորման, ինչպես նաև գովազդի ու վաճառքի վերաբերյալ հմտություններ ձեռք բերելու ուղղությամբ: Դասընթացներին մասնակցեցին 28 մարզային թերթերի ավելի քան 90 ներկայացուցիչներ: Դասընթացների ավարտից հետո, Եվրասիա համագործակցություն հիմնադրամը հայտարարեց դրամաշնորհային մրցույթ, որի արդյունքում 6 մարզային թերթեր ֆինանսական աջակցություն ստացան՝ բիզնես-ծրագրեր իրականացնելու համար: Աշխատանքներն արդյունավետ կատարելու նպատակով նրանց տրամադրվում է նաև խորհրդատվական աջակցություն՝ կառավարման համակարգերը բարելավելու համար: Այսպես՝ կապահովվի թերթերի երկարատև կայուն գործունեությունը:

Գործողությունների ծրագիր

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի աշխատակիցներից և անկախ փորձագետներից կազմված հանձնաժողովը ներկայացված հայտերի հիման վրա ընտրեց 28 մարզային թերթերի, որոնք մասնակցեցին դասընթացներին: Նախապավությունը տրվեց այն թերթերին, որոնք լույս են տեսնում մեծ տպաքանակով և ֆինանսապես կայուն գործելու մեծ ներուժ ունեն: Դասընթացներն ուղղված էին հետևյալ թեմաների տեսությանն ու գործնական կիրառմանը.

- Թերթերի կառավարում
- Ֆինանսական կառավարում
- Մարկետինգ և գովազդ
- Լրագրություն և խմբագրում
- Մակետավորում
- Ֆոտոլրագրություն

Աշխատանքների բարելավում

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը ֆինանսական աջակցություն տրամադրեց այն վեց մարզային թերթերին, որոնք պատրաստ էին որակական փոփոխություններ կատարել իրենց աշխատանքներում և սեփական թերթի ֆինանսական կայունությունն ապահովելու նպատակով ներկայացրեցին բիզնես ծրագրեր: Նրանց ծրագրերում ընդգրկված են հետևյալ գործողությունները՝

- շուկայի ուսումնասիրում՝ գնահատելու գործարարների գովազդային կարիքներն ու հետաքրքրությունները
- թերթերի վեբ տարբերակների ստեղծում և պահպանում
- խմբագրություններում տարածման և մարկետիգի բաժինների ստեղծում
- հանրային լսումների վերաբերյալ լրահոսի տրամադրում

Թերթերի տարածման նոր գործակալություններ ստեղծելու նպատակով Եվրասիա համագործակցություն հիմնադրամը նախատեսում է այդ թերթերին ընդգրկել տպագիր մամուլի տարածման ցանցում: Այսպիսով՝ ակնկալվում է ավելացնել թերթերի տարածումն ու բաժանորդագրությունից բխող հասույթը:

Եվրասիա հիմնադրամը մասնավոր կառավարվող, ոչ շահութաբեր կազմակերպություն է, որին աջակցում են ԱՄՆ կառավարությունը և այլ դոնորներ: 1992 թ-ից ի վեր Եվրասիա հիմնադրամը ներդրել է ավելի քան 370 միլիոն ԱՄՆ դոլար և իրականացրել ավելի քան 8400 դրամաշնորհային և տեխնիկական աջակցության ծրագրեր Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Ղազախստանում, Ղրղզստանի Հանրապետությունում, Մոլդովայում, Ռուսաստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուկրաինայում և Ուզբեկստանում: Սկսած 1992 թ-ից՝ Եվրասիա հիմնադրամը Հայաստանում ներդրել է ավելի քան 30 միլիոն ԱՄՆ դոլար:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Եվրասիա հիմնադրամի հետևորդ կազմակերպությունն է:

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի նվիրատվության շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Համալրել, ընձեռել, հզորացնել

ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ընտրված թերթերն՝ ըստ մարզերի

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Նուբե Սարգսյան
Ինտերնյուս-Հայաստան

Արտաշես Թերզյան
Investment Bank Trust,
National Bank Trust,
Ռուսաստան

Մարգարիտա Փիլիպոսյան
Հայ օգնության ֆոնդ

Դավիթ Հովհաննիսյան
Երևանի պետական համալսարանի մշակույթի և քաղաքակրթության կենտրոն

Արա Համազասպյան
«Իզմիրլյան հիմնադրամի երևանյան գրասենյակ

Արսեն Ղազարյան
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

Հասցե՝ 0009, ՀՀ, ք. Երևան, Զարոբյան փ. 56
Հեռ./ֆաքս՝ (374 10) 58 60 95/96
info@epfound.am, www.epfound.am